ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3701 ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Հեռ.(0287) 2.12.17, (060)747077
Ֆաքս 2.12.02, (060)747077

N 58
23 ՀՈՒՆՎԱՐԻ 2026թ.

«Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի Կ.Պողոսյան.

Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու)և «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև՝ 05.06.2025թ-ին կնքվել է ՆՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով Ջերմուկ քաղաքի ըմպելասրահին կից լճակում գունաձայնային շատրվանների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման եվ կազմման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր(այսուհետ՝ Պայմանագիր):Հիշյալ պայմանագրի շրջանակներում «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն ստանձնել է Ջերմուկ քաղաքի ըմպելասրահին կից լճակում գունաձայնային շատրվանների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը, որի ժամկետը սահմանված էր մինչև 05.07.2025թ.-ը ներառյալ:Հաշվիառնելով «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի՝ 24.06.2025թ.-ի գրությունը և N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը՝ 25.06.2025թ. կնքված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 1 համաձայնագրով ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել էր մինչև 04.08.2025 թ.-ը ներառյալ:Ջերմուկի համայնքապետարանի կոմից՝ 05.08.2025թ.-ին «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ին ուղարկված N 846 ելից գրությամբ տրամադրվել էր տասնհինգ օրացուցային օր, այնուհետև 20.08.2025թ. N 904 ելից գրությամբ ևս յոթ աշխատանքային օր ժամկետ՝(որպես ողջամիտ ժամկետ) պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու և նախագծանախահաշվային փաստաթղթերը Ջերմուկի համայնքապետարան ներկայացնելու համար՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքնային օրվա համար գանձելով N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի 5.3 կետով սահմանված տույժը:

Վերոնշյալ ժամանակահատվածներում «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն չէր կատարել N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները և Ջերմուկի համայնքապետարան փաստացի չէր ներկայացրել ընկերության կողմից հաստատված համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Համաձայն Ջերմուկի համայնքապետարանի և «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի միջև՝ 05.06.2025թ-ին կնքված N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի՝ Ջերմուկի համայնքապետարանը 01.09.2025թ.-ից միակողմանի լուծել էր «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի հետ՝ 05.06.2025թ-ին կնքված N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի և N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի 7.11 կետի դրույթները:

«Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած պայմանագրի ապահովումը սահմանված կարգով ներկայացվել

էր Ընկերությանը սպասարկող ֆինանսական կառույցին(Բանկ)՝ Ջերմուկի համայնքապետարանին փոխանցելու նպատակով:Սահմանված ժամկետում հիշյալ պայմանագրի ապահովումը փոխանցվել էր Ջերմուկի համայնքապետարան, ինչի արդյունքում «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ինկատմամբ չէր կիրառվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության պահանջները:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը թիվ ԵԴ2/10309/02/25 գործի քննության արդյունքում 31.10.2025թ-ին կայացրած վճռով անվավեր էր ճանաչել Ջերմուկի համայնքապետարանի կողմից՝ 01.09.2025թ-ի, 05.06.2025թ-ին կնքված ՆՋՀ-ԳՀԾՁԲ-25/2ծածկագրովպայմանագրի միակողմանի լուծումը:

Հաշվի առնելով վերոգրյալները՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հիշյալ վճռի ուժի մեջ մտնելուց հետո, Ջերմուկի համայնքապետարանը «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ին ուղարկված 04.12.2025թ-ի N 1258 ելից գրությամբ տրամադրել էրևս տասնմեկ աշխատանքային օր ժամկետ՝(որպես ողջամիտ ժամկետ) պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու և նախագծանախահաշվային փաստաթղթերը Ջերմուկի համայնքապետարան ներկայացնելու համար՝յուրաքանչյուր ուշացված աշխատանքնային օրվա համար գանձելով N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի 5.3 կետով սահմանված տույժը, սակայն «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն մինչ օրս չի կատարել պայմանագրով սահմանված իր պարտավորությունները և Ջերմուկի համայնքապետարան չի ներկայացրել պայմանագրով սահմանված նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալները՝ Ջերմուկի համայնքապետարանը 23.01.2026թ.-ից միակողմանի լուծում է «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի հետ՝ 05.06.2025թ-ին կնքված ՆՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագիրը՝ առաջարկելով «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ին վճարելու պայմանագրով նախատեսված և չվճարված տույժերը/մինչ օրս 50 աշխատանքային օր, որը կազմում է 39050 ՀՀ դրամ/, այլապես այդ տույժերը կգանձվի դատական եղանակով:

Ծանոթություն:Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ